ԽԱՎԻԱՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

European Stability Initiative

CAVIAR DIPLOMACY

How Azerbaijan silenced the Council of Europe

Եվրոպական կայունության նախաձեռնություն

ԽԱՎԻԱՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես Ադրբեջանը լռեցրեց Եվրոպային

Թարգմանությունն անգլերենից՝
Սիրանույշ Մուրադյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 327(042.3)
ԳՄԴ 66.4
Խ 332

Խ 332 Խավիարային դիվանագիտություն: Ինչպես Ադրբեջանը լռեցրեց Եվրոպային /Թարգմանությունն անգլերենից՝ Ս. Մուրադյանի.- Եր.: Newmag, 2023.- 156 էջ:

Այս զեկույցում ներկայացվում է Բաքվի «խավիարային դիվանագիտությունը», որը հանգեցրել է Եվրախորհրդի պատմության մեջ աննախադեպ կոռուպցիոն սկանդալի: «Եվրոպական կայունության նախաձեռնություն» կենտրոնը դրվագ առ դրվագ ներկայացնում է, թե ինչպես է Բաքվի խավիարը «շատ խնդիրներ հարթել» ԵԽ-ում: Զեկույցը հասցեական ցույց է տալիս Եվրոպայով մեկ պատգամավորներին կաշառելու, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում թանկ զարդերով ու ժամացույցներով, գորգերով, փողով ձայներ գնելու փաստերը, նաև թվարկում է եվրապաշտոնյաների վճարվող արձակուրդները, վոյաժները Բաքու, բիզնես պայմանագրերը:

ՀՏԴ 327(042.3)
ԳՄԴ 66.4

ISBN 978-9939-884-83-7
Եվրոպական կայունության նախաձեռնություն.
«Խավիարային դիվանագիտություն» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել ԵԿՆ Բեռլինի գրասենյակի ղեկավար Քրիստիան Ալտֆուլդիշի գրավոր թույլտվությամբ:

Բովանդակություն

Մաս 1

Խավիարային դիվանագիտություն 7

Կերպարներ 9

I Ժառանգության դավաճանություն 19

II Ներսում ավելի՞ լավ է, քան դրսում 25

Ա. Ադրբեջանն ու կասկածի օգուտը 25

Բ. Ընտրություններն ու բռնապետության ամրապնդումը 33

Գ. Ճշմարտության պահը Ստրասբուրգում (2006) 44

III Խավիարային դիվանագիտություն 53

Ա. Լռեցնելով ԵԽԽՎ-ին 53

Բ. Ինչպես գողանալ ընտրությունը (2010) 74

Մաս 2

Եվրոպական ճահիճը 93

Կերպարներ 95

Մարդու իրավունքների վաճառք 97

Կյանքը ճահճի մեջ 103

«Քո ցանկությունն ինձ համար օրենք է» 108

Ֆիաթ լյուքս 120

Կոռուպցիայի գինը վճարողները 128

Վերադարձ Եվրոպայի խորհուրդ 131

Հավելված. ի՞նչ անել հիմա 133

Թարգմանչի կողմից 137

Ծանոթագրություն 144

ՄԱՍ 1

Խավիարային դիվանագիտություն

Ինչպես Ադրբեջանը լռեցրեց Եվրոպայի խորհրդին

Բեռլին,
մայիսի 24, 2012

Կերպարներ

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) անդամներ

Քննադատներ

Անդրեաս Գրոսս
(Շվեյցարիա)
Մոնիտորինգի հանձնաժողովի
2001-2006 թթ. զեկուցող,
սոցիալ-դեմոկրատ

Զատագովներ*

Ժոզեֆ Դեբոնո Գրեչ
(Մալթա)
2009-ից մոնիտորինգի
հանձնաժողովի զեկուցող,
լեյբորիստ

---

* «Զատագովներ» ենք անվանում ԵԽԽՎ այն անդամներին, որոնք պաշտոնապես պաշտպանում են Ադրբեջանի ժողովրդավարությունը և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նիստերում հրապարակային գովերգում են նրանց ընտրությունները: «Քննադատները» նրանց թերությունները հետևողականորեն մատնացույց անողներն են:

Մալքոլմ Բրյուս
(Մեծ Բրիտանիա)
քաղբանտարկյալների հարցերով
2003-2005 թթ. զեկուցող,
լիբերալ-դեմոկրատ

Մայք Հենքոկ
(Մեծ Բրիտանիա)
ԵԽԽՎ անդամ,
լիբերալ-դեմոկրատ

Քրիստոֆ Շտրասսեր
(Գերմանիա)
քաղբանտարկյալների հարցով
2009-2012 թթ. զեկուցող,
սոցիալ-դեմոկրատ

Էդուարդ Լինթներ
(Գերմանիա)
2006-2007 թթ. մոնիտորինգի
հանձնաժողովի ղեկավար,
քրիստոնեա-դեմոկրատ

Ադրբեջանի ժողովրդավարության և ընտրությունների ջատագովները

Ժոզեֆ Դեբոնո Գրեչ

«Խնդիրներ կան ամեն մի երկրում, բայց վիճակն ընդհանուր առմամբ մխիթարական է: Մենք կարող ենք օգնել Ադրբեջանին, որը դեռ շատ երիտասարդ ժողովրդավարություն է, քանի որ 20 տարին այնքան էլ շատ չէ: Բայց այս կարճ ուղու համար դուք գերազանց աշխատանք եք կատարել»: (news.az, հոկտեմբերի 4, 2011)

Պեդրո Ագրամունտ

«Մենք երկուսս էլ համակարծիք ենք, որ պետք է նկատել երկրի ժողովրդավարացման կարևոր առաջընթացը: Մենք արձանագրում ենք Ադրբեջանի իշխանությունների կատարած օրենսդրական տպավորիչ աշխատանքը՝ օրենքները Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով»: (Փետրվար, 2011, Փաստահավաք տեղեկությունների նոթագրություն)

Փոլ Ուիլ

«2010-ի ընտրություններն առավելապես մեր սեփական՝ ԵԽԽՎ, ԵԱՀԿ և միջազգային չափանիշների և պար-

տավորությունների համատեքստում էին»: (Մամուլի ասուլիս Բաքվում, նոյեմբեր, 2010)

Մայք Հենքոկ

«Հպարտ եմ, որ մասնակցել եմ Ադըրբեջանի ընտրություններին (2010 թ.): Լավագույնը, որ կարող եք ասել Եվրոպայում կամ որևէ այլ տեղ անցկացված ընտրությունների մասին, հետևյալն է. ընտրությունների հաջորդ օրը մարդկանց մեծամասնությունն ունի այն արդյունքը, որը հենց մեծամասնությունն է ցանկանում: (Քննարկում ԵԽԽՎ-ում, հունվար, 2011)

Էդուարդ Լինթներ

«Լինթներն ասում է, թե Մարդու իրավունքների հանձնաժողովից իր հեռանալու պատճառներից մեկն այն էր, որ Եվրոպայի խորհրդում կար մի խումբ, որը ցանկանում էր խստորեն դատապարտել մարդու իրավունքների ենթադրյալ խախտումները: Ի տարբերություն նրանց՝ Լինթներն ասում է, որ կնախընտրեր «աջակցելով ուղեկցել (Ադըրբեջանին)»: (Spiegel, հունվարի 4, 2012)

Ընտրության գողությունը (2010)

Իլհամ Ալիև
(Ադրբեջան)
Նախագահ (2003-ից մինչև այսօր),
ԵԽԽՎ-ում պատվիրակության
ղեկավար (2001-2003)

Ռամիզ Մեհդիև
(Ադրբեջան)
Նախագահի աշխատակազմի
ղեկավար

Վոլֆգանգ Գրոսսրուկ
(Ավստրիա)
2010 թ. ԵԱՀԿ խորհրդարանական
վեհաժողովի պատվիրակության
ղեկավար

Թադեուշ Իվինսկի
(Լեհաստան)
2010 թ. ԵԽԽՎ ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավարի տեղակալ

Օդրի Գլովեր
(Մեծ Բրիտանիա)
2010 թ. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավար

Ռամիզ Մեհդիև

«Մեհդիևն ընտրակեղծիքների համար մեղադրել է նաև խորհրդային շրջանից մնացած մտածելակերպը: Տեղեկացնելով դեսպանին, որ ինքն ընտրությունների համար խորհրդային ժամանակներում է պատասխանատու եղել և հիմա էլ է ստանձնել պատասխանատվություն, Մեհդիևը նախ ասաց, թե ընտրությունների հանդեպ ընդհանուր վերաբերմունքը չի փոխվել, հետո, սակայն, ասաց, թե 1995-2005 թթ. «որոշ» դրական փոփոխություններ եղել են»: (ԱՄՆ դիվանագետների հետ զրույցում, 2006)